

ՀԾ-Վաճառատեղ

Փոքր խանութների ավտոմատացման համակարգ

Դուք բացել եք Ձեր առաջին խանութը և դեռևս խանութի հաշվառման համակարգ ձեռք բերելու հնարավորություն չունեք: Միզուցեք խանութը փոքր է և պարզապես նպատակահարմար չէք համարում համակարգ ձեռք բերելը:

Հայկական Ծրագրեր ընկերությունը թողարկել է **ՀԾ-ՎԱՃԱՌԱՏԵՐ** նոր սերնդի **ԱՆՎՃԱՐ** համակարգ փոքր խանութների համար:

ՀԾ-Վաճառատեղ համակարգի համակցումը նոր սերնդի ՀԴՄ և առևտրային սարքավորումների հետ հեշտացնում են վաճառքի գործընթացը՝ հնարավորություն տալով արագ սպասարկել հաճախորդներին:

Բազմաթիվ ՀԴՄ կիրառող կազմակերպություններ, օգտագործելով ՀԾ-Վաճառատեղ համակարգը, հնարավորություն կունենան խուսափել լրացուցիչ, որոշ դեպքերում զգալի ծախսերից, որոնք անհրաժեշտ են վաճառքների ավտոմատացման համակարգեր ձեռք բերելու և ներդնելու համար:



Ձեզ պետք է միայն բեռնել, տեղադրել և սկսել աշխատանքը

Համառոտ ֆունկցիոնալ նկարագրություն

Վաճառք

- հաճախորդի արագ սպասարկում,
- գծիկավոր կող կարդացող սկաների կիրառում,
- կանխիկ վճարում և մանրադրամի հաշվարկ,
- տոկոսային զեղչի կիրառում,
- ապառիկ վաճառք և գնորդների հետ փոխհաշվարկներ,
- ապրանքային կտրոսի տպում,
- համակցում նոր սերնդի ՀԴՄ հետ,
- քաշային ապրանքի վաճառք,
- գնացուցակների հետ աշխատանք և տպում,
- գնափոխակների տպում:

Գնումներ

- ապրանքների ձեռքբերում,
- ապրանքների ինքնարժեքի հաշվառում միջին կշռված մեթոդով,
- մատակարարների հետ փոխհաշվարկներ:

Հաշվետվություններ

- ապրանքների գումարա-քանակային շարժ և մնացորդներ,
- ապրանքների վաճառքների գումարային և քանակային ծավալների վերլուծություններ,
- գնորդների և մատակարարների պարտք ու պահանջներ,
- եկամուտ և ծախսեր,
- վերլուծական դիագրամներ:

Տեղադրման և օգտագործման պարզություն

Համակարգի տեղադրումն ու դրա հետ հետագա աշխատանքը շատ պարզ են և չեն պահանջում կազմակերպությունում տեխնիկական մասնագետի ներկայություն: Անփորձ օգտագործողը կարող է կարճ ժամանակում լիովին յուրացնել այն: Համակարգի տեխնիկական պահանջները բարձր չեն, այսինքն կազմակերպությանը սովորաբար անհրաժեշտ չի լինում համակարգի շահագործման համար ձեռք բերել լրացուցիչ համակարգչային տեխնիկա կամ ծրագրային ապահովում:

Չի պահանջում հատուկ ուսուցում և ծավալուն ներդրում

Ծրագրի օգտագործման համար չի պահանջվում հատուկ ուսուցում: Ծրագրի ավելի խորը հնարավորություններին կարելի է ծանոթանալ Էլեկտրոնային ռեսուրսների միջոցով:


12 տարի անվճար և որակյալ լուծումներ

Հայկական Ծրագրեր ընկերությունը ավելի քան 12 տարի իր կողմից մշակված հաշվապահական և առևտրային համակարգերի վճարովի տարբերակների հետ մեկտեղ կազմակերպություններին առաջարկում է նաև անվճար լուծումներ:

Անվճար համակարգերը հանդիսանում են լիարժեք աշխատանքային տարբերակներ և չեն պարունակում որևէ սահմանափակում:

Անվճար համակարգերը հնարավորություն են տալիս մեր օգտագործողներին ոչ միայն վարել իրական հաշվառում, այլև գնահատել ավտոմատացման համար մեր առաջարկած լուծումները: Հետագայում հաշվառման պահանջների փոփոխությամբ պայմանավորված՝ օգտագործողները սահուն անցնում են մեր ավելի ֆունկցիոնալ համակարգերին:





Ժամանակակից, գեղեցիկ, հարմար աշխատանքային միջավայր

- Համակարգի աշխատանքային միջավայրը կառուցված է ծանոթ ու հարմար MS-Office ոճով: Սա թույլ է տալիս օգտագործողներին հեշտությամբ սկսել համակարգով աշխատանքը և խուսափել նոր աշխատանքային միջավայրին սովորելու համար ծախսվող ժամանակից և անհարմարությունից:
- Համակարգն աշխատում է Unicode-ով, ինչը հնարավոր է դարձնում ցանկացած լեզվով մուտքագրված տվյալների հետ աշխատանքը:
- Մուտքագրման ժամանակ կատարվող բազմաթիվ ստուգումներն ապահովում են տվյալների ամբողջականությունն ու ճշտությունը:
- Համակարգն ունի գունային ու տառատեսակների տարբեր թեմաներ: Յուրաքանչյուր օգտագործող կարող է ընտրել համակարգի՝ իրեն առավելապես հարմար տեսքը:

Հզոր ու ճկուն հաշվետվական համակարգ

Հաշվետվություններում տվյալների ֆիլտրման, խմբավորման, հանրագումարների ավելացման, սյունների ընտրման գործիքները թույլ են տալիս անմիջապես աշխատանքի ընթացքում, առանց որևէ ջանքի համակարգից ստանալ ցանկացած տվյալ, ցանկացած տեսքով:

Վերլուծական դիագրամներ

Համակարգը թույլ է տալիս գործունեության արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշները գրաֆիկորեն արտացոլել մեկ պատուհանում:

Համակցում MS Word, MS Excel ծրագրերի հետ

Համակարգից տվյալները կարող են արտահանվել MS Word և MS Excel միջավայրեր:

Արտահանում և ներմուծում

Բոլոր տվյալները արտահանվում և ներմուծվում են XML ֆորմատի ֆայլերի միջոցով:

Մեր մասին

Հայկական Ծրագրերը Հայաստանի բանկային, հաշվապահական, առևտրային և CRM համակարգերի շուկայի բացարձակ առաջատարն է: Այսօր ՀԾ համակարգերով հաշվառվում են 8000-ից ավելի կազմակերպությունների հաշվառումներ: Ֆինանսական բիզնես-գործընթացների ավտոմատացման ոլորտում մեծ փորձառություն ունեցող 150 աշխատակիցներով Հայկական Ծրագրերը Հայաստանի SS ոլորտի առաջատարն է ևսև սերտիֆիկացված մասնագետների թվով: 2009թ.-ից Հայկական Ծրագրերը հանդիսանում է Microsoft Gold Certified Partner:

Կոնտակտներ

Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 1
 Հեռ.՝ 060 69-00-00
www.armsoft.am
info@armsoft.am